

Երիտասարդ կանանց առաջնորդության ինստիտուտ

**Քաղաքացիական հասարակության
զարգացման կենտրոնը** պատիվ ունի
հայտարարելու, որ վերջերս Երևանում
բացվել է **Երիտասարդ կանանց
առաջնորդության ինստիտուտ**: Այնտեղ
երիտասարդ կանայք կուսանեն
բազմաթիվ անհրաժեշտ
մասնագիտական և առաջնորդական
գիտելիքներ, որոնք նրանց կօգնեն
հետագա հաջողակ կարիերայի
հարցում: Նրանք կուսանեն
համակարգիչ և անգլերեն,
քաղաքացիական կրթություն և
առաջնորդություն, բիզնես
հիմունքներ, կիանդիպեն ակնավոր
մարդկանց: Կկազմակերպվեն նաև
էքսկուրսիաներ, որոնց ընթացքում
նրանք կայցելեն Հայաստանի
գեղատեսիլ և պատմական վայրերը: Այս
ծրագիրը **Երիտասարդ կանանց
աջակցման կենտրոնի**
շարունակությունն է, որը **ՔՀԶԿ-ի** մասն
է կազմում 1998թ-ից:

Բացի այն, որ աղջիկները
ինստիտուտում ձեռք կբերեն
մասնագիտական հմտություններ,
նրանք նաև կօգտվեն այն լրացուցիչ
պարապմունքներից, որոնք կկազմեն
ՔՀԶԿ-ի անձնակազմի հետ միասին:

ՔՀԶԿ-ն Հայաստանի 3 մարզերում
/Արարատ, Արագածոտն, Արմավիր/
բացել է **Երիտասարդ կանանց
աջակցության կենտրոններ**:
Աջակցության կենտրոնում
կուսուցանեն նմանատիպ բազմաթիվ
ծրագրեր՝ պատշաճ մակարդակով:
Հետագայում պլանավորվում է
Կենտրոններ բացել Հայաստանի մյուս
մարզերում:

Նպատակները

Հեռահար նպատակ

- Օգնել երիտասարդ կանանց դառնալ
ակտիվ քաղաքացիներ
- Կանխել տրաֆիկինգի մակարդակը
երիտասարդ կանանց շրջանում,
ինտեգրելով նրանց
հասարակությունում

Կարճատև նպատակ

- Կատարելագործել երիտասարդ
կանանց կարողությունները
հաջողակ աշխատանքի համար
- Աջակցել նրանց գտնել իրենց տեղը
փոփոխվող սոցիալական
միջավայրում

Ինստիտուտը և նրա մարզային
կենտրոնները կօգնեն երիտասարդ
կանանց գիտելիքներ ձեռք բերել, որոնք
կօգտագործվեն աշխատանքային
ասպարեզում, կաջակցեն դրանց
ներառմանը հասարակական
գործունեությունում: Երիտասարդ

կանայք կկատարելագործեն նաև
սեփական արժեքների գնահատման
մակարդակը և կստանան այն
անհրաժեշտ գիտելիքները, որոնք
հետագայում կապահովեն հաջողակ
աշխատանքային գործունեություն:
**Երիտասարդ կանանց աջակցման
կենտրոնը** Երևանում արդեն
կազմակերպել է 3 սեմինար:

Կշնորհվեն վկայականներ հետևյալ ուղորտների վերաբերյալ.

- համակարգչային գիտելիքներ
- գրասենյակային կառավարում
- հասարակական
կազմակերպության ղեկավարում

Պատմական էքսկուրս

Մի քանի պատճառներ կան ԵԿԱ-ի
ստեղծման համար: Սովետական
Միության փլուզումից հետո շատ բան է
փոխվել Հայաստանում: Որպես անցման
շրջանի արդյունք կրթությունը դարձել է
վճարովի: Այն ոչ բոլորին է հասանելի,
իսկ վճարովի կրթության քվոտան
տարեցտարի աճում է: Սոցիալապես
անապահով ընտանիքները գումարի
առկայության դեպքում գտագործում են
այն տղաներին կրթելու համար:

Սոցիալապես անապահով
ընտանիքների աղջիկների
մեծամասնությունը /17-22տ./
հնարավորություն չունեն շարունակել
իրենց կրթությունը և ստանալ

համապատասխան մասնագիտական գիտելիքներ հետագայում աշխատանքի տեղավորվելու համար :

Արդյունքում նրանցից շատերը համալրելով գործազուրկների շարքերը, ստիպված զբաղվում են մարմնավաճառությամբ: Աղջիկների մեկուսացումը հասարակությունից և նրանց վերջնական հետընթացը շատ դեպքերում պայմանավորված է նրանց ակտիվ հասարակական կյանքում ներգրավված չլինելով:

Այնուամենայնիվ **ՔՀԶԿ-ն** գտնում է, որ շատ կարևոր է աղջիկներին դարձնել առավելագույնս մեծ ուշադրություն, քանի որ նրանց ներառումը քաղաքացիական հասարակություն կօգնի հետագայում հասարակության զարգացմանը:

Երիտասարդ կանանց առաջնորդության ինստիտուտ և աջակցության կենտրոններ մարզերում



*ՔՀԶԿ-ն պատրաստ է կապեր
հաստատելու և համագործակցելու
տեղական և միջազգային շահագրգիռ
կազմակերպությունների հետ*

Փոստային հասցեն. Նալբանդյան 49, #7
0025 Երևան, Հայաստան
Գրասենյակի հասցեն. Աղայան 15, # 17
0009 Երևան, Հայաստան
Հեռ. (374-10) 560 -544
Ֆաքս. (374-10) 585- 677
Էլ.-փոստ. info@cdcs.am
Website: <http://www.cdcs.am>

